



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Կոտայքի մարզի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Վարոսյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Լ.Հովհաննիսյան
Մ.Մելքոնյան

27 փետրվարի 2026 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Մնացական Սերյոժայի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի օգոստոսի 1-ին Մնացական Սերյոժայի Մուրադյանը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել է:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով և 404-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 20807923 քրեական վարույթը:

2023 թվականի օգոստոսի 3-ին՝ Մ.Մուրադյանն ազատ է արձակվել ձերբակալումից:

2024 թվականի հունիսի 13-ին Մնացական Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում, և նրան մեղադրանք է ներկայացվել:

2024 թվականի հունիսի 14-ին մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

2024 թվականի հունիսի 19-ին քրեական վարույթը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, արագացված վարույթի կիրառմամբ, 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով Մնացական Մուրադյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառմամբ՝ ազատազրկման ձևով նշանակված պատժին հաշվակցվել է Մնացական Մուրադյանի փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը՝ 3 (երեք) օրը, և վերջինին թողնվել է կրելու ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության

Հայաստանի Հանրապետության տարածքը չլքելու պարտականության սահմանմամբ: Մ.Մուրադյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Կոտայքի մարզի դատախազության դատախազ Հ.Բաղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2024 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Արամյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական օրենքի էական խախտում, մասնավորապես՝ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելու և ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատժաչափը և այն պայմանականորեն չկիրառելը համարել է իրավաչափ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

5.1. Բողոք բերած անձը գտել է, որ մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել վերջինիս կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը բնութագրող հանգամանքները, դրանց չեն տվել անհրաժեշտ քրեաիրավական նշանակություն:

5.2. Բողոք բերած անձի պնդմամբ՝ պատժաչափի որոշման և ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառման իրավաչափության հարցը քննարկելիս,

ստորադաս դատարանները պատշաճ գնահատականի չեն արժանացրել նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Մասնավորապես՝ որպես մեղադրյալի անձը բնութագրող տվյալ, ստորադաս դատարանները հաշվի են առել, որ նա համարվում է դատվածություն չունեցող, ամուսնալուծված է, ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, ունի երկու անչափահաս երեխա, որոնք իր խնամքին չեն, մինչդեռ, բողոքաբերի գնահատմամբ՝ նշված հանգամանքներն օբյեկտիվորեն չեն կարող համարվել նրա կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող և պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք հանդիսանալ:

Անդրադառնալով մեղադրյալի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող գնահատված մյուս հանգամանքին, մասնավորապես՝ մեղքն ընդունելուն, բողոքաբերը փաստել է, որ դրա ազդեցությունը նշանակվող պատժի տեսակի և չափի վրա մեխանիկական չէ:

5.3. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ անձի մարված դատվածությունը ենթակա է գնահատման որպես բնութագրական հատկանիշ, որը դիտարկվում է անձի դրսևորած իրավահպատակ կամ իրավախախտ վարքագիծ դրսևորելու չափանիշ: Հետևաբար, բողոք բերած անձի պնդմամբ՝ սույն պարագայում հաստատված է, որ Մ.Մուրադյանը նախկինում՝ 2011 թվականի դեկտեմբերի 8-ի դատավճռով դատապարտվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի պահելու համար:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ «Դատալեքս» տեղեկատվական համակարգի համաձայն Մ.Մուրադյանը 2024 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ԿԴ/0276/01/24 օրինական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է 375.000 ՀՀ դրամ տուգանքի:

Բողոքաբերի ընդգծմամբ՝ հիշատակված քրեական գործերով մի դեպքում անցել են Մ.Մուրադյանի դատվածություն ունենալու ժամկետները, իսկ մյուս դեպքում

հանցանքը կատարվել է սույն գործով մեղսագրվող արարքը կատարելուց առաջ, սակայն դատական ակտը կայացվել է սույն գործով դատավճռի կայացումից հետո:

Հետևաբար, բողոքաբերի գնահատմամբ՝ բողոքում մեջբերված փաստական տվյալները վկայում են Մնացական Մուրադյանի կողմից կայուն հակաիրավական և հակասոցիալական վարքագիծ դրսևորելու մասին, որպիսի հանգամանքը պետք է գնահատական ստանար վերջինիս նկատմամբ պատժաչափը որոշելու և այն ռեալ կրելու նպատակահարմարության հարցը քննարկելու համար:

6. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը բեկանել և կայացնել դրան փոխարինող դատական ակտ: Մնացական Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակել պատիժ՝ 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկում՝ հաշվակցելով արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ անթույլատրելի ճանաչելով Մնացական Մուրադյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը:

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական և իրավական հանգամանքները.

7. Մ.Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է ներկայացվել և նա մեղավոր է ճանաչվել այն արարքի համար, որ «(...) [Ես] առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափերի «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Այսպես.

Մնացական Սերյոժայի Մուրադյանը խախտելով «Թմրամիջոցների և հոգեմեկր նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմեկր (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու և իրացնելու թույլտվություն, 2023 թվականի հուլիս ամսվա վերջին՝ գործով չպարզված օրը, Արամնու գյուղի հարակից դաշտամիջյան տարածքից քաղելու և չորացնելու միջոցով ապօրինի ձեռք է բերել և պահել ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N707-Ն որոշման 1-ին հավելվածի

81-րդ կերով սահմանված՝ առանձնապես խոշոր չափերի՝ 85.76 գրամ «Մարիխուանա» փեսակի թմրամիջոց, որը 2023 թվականի օգոստոսի 1-ին ներել է ընկերոջը՝ *****-ին, պարկանոց ***** քաղաքի ***** փողոցի *****-րդ հասցեում գրնվող շան բնի մեջ և հայրնաբերվել է նույն օրը նշված վայրում կատարված դեպքի վայրի զննության ժամանակ (...)¹:

8. Առաջին ատյանի դատարանը, արագացված վարույթի կիրառմամբ, մեղադրյալ Մ.Մուրադյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով, արձանագրել է հետևյալը. «(...) Արագացված վարույթ կիրառելու պայմաններում դատարանն ապացուցված է համարում մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը), այդ արարքի քրեական հակահրավականությունը, մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը, մեղադրյալի մեղավորությունը փոխադրված արարքը կատարելու մեջ, ինչպես նաև գրնում է, որ մեղադրյալի արարքի նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հաստատված փաստական հանգամանքների հիման վրա դատարանը գրնում է, որ Մնացական Սերյոժայի Մուրադյանի անձը բնութագրող հանգամանք է դարձվածություն չունենալը և առողջական որոշակի խնդիրներ ունենալը:

Գատարանը արձանագրում է, որ Մնացական Սերյոժայի Մուրադյանի պարասիանարվությունն ու պարիժը մեղմացնող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներ առկա չեն՝ հաշվի առնելով մեղադրյալի հայրարարությունն այն մասին, որ ամուսնալուծված է, չունի մշտական բնակության վայր և անչափահաս երեխաները բնակվում են կնոջ հետ:

Գատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, գրնում է, որ Մնացական Սերյոժայի Մուրադյանի պարասիանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք պետք է դիտել ներկայացված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը, կատարածի համար զղջալը և նախաքննության ընթացքում խոստովանական ցուցմունքներ փալը:

¹ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 150-151:

Գաբարյանը միաժամանակ արձանագրում է, որ Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի պարասիանսարվությունն ու պարիժը ծանրացնող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքներ առկա չեն:

(...) Գնահատման ենթարկելով մեղադրյալ Մասցակյան Սերյոժայի Մուրադյանին ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով մեղսագրվող հանցագործության առարկան՝ դաբարյանն արձանագրում է, որ պայմանավորված մարիխուանա թմրամիջոցի տեսակով այն օժտված է համեմատաբար ոչ բարձր հանրային վրանգավորությամբ:

Հաշվի առնելով Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի կադրած հանցանքի հանգամանքները, նրա անձը բնութագրող տվյալները, պարասիանսարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքը, պարասիանսարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված մյուս հանգամանքները, ինչպես նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով որպես հիմնական պարիժ է նախատեսված միայն ազատազրկման ձևով՝ դաբարյանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարժի նպատակներն ապահովելու համար նրա նկատմամբ հիմնական պարիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Գաբարյանը միաժամանակ գրնում է, որ Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի նկատմամբ լրացուցիչ պարիժ նշանակելու հիմքերն ու անհրաժեշտությունը բացակայում են:

Գաբարյանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված ազատազրկման ձևով պարժին պետք է հաշվակցել Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի ձերբակալման հիմքով անազատության մեջ գրնված ժամկետը՝ 3 օրը և վերջինին պետք է թողնել կրելու ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

Անդրադառնալով մեղադրյալ Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի կողմից իր նկատմամբ նշանակված պարիժը կրելու հարցին՝ դաբարյանը հարկ է համարում նշել հետևյալը. (...)

- Մասցակյան Սերյոժայի Մուրադյանի կադրած հանցանքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին,

- մարիխուանա փեսակի թմրամիջոցը օժտված է համեմատաբար ոչ բարձր հանրային վրանգավորությամբ,

- Մսացական Սերյոժայի Մուրադյանի անձը բնութագրող փվյալները, պարասիանաարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքը, պարասիանաարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Վերոգրյալ հանգամանքների հաշվառմամբ դատարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարժի նպարակների իրականացումը հնարավոր է առանց Մսացական Սերյոժայի Մուրադյանի կողմից իր նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պարիժը կրելու, հերևարար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ այդ պարիժը պեպք է պայմանականորեն չկիրառել:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ Մսացական Սերյոժայի Մուրադյանի նկատմամբ նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու պայմաններում դատարանը գրնում է, որ նրա նկատմամբ պեպք է սահմանել փորձաշրջան՝ 2 (երկու) փորձաշրջանի ընթացքում նրա վրա դնելով պարականություն՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության չլքել Հայաստանի Հանրապետության փարածքը (...)²:

9. Վերաքննիչ դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը «(...)Սույն գործով Առաջին արյանի դատարանն անդրադառնալով մեղադրյալ Մսացական Մուրադյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պարիժը կրելու հարցին, հաշվի առնելով այն, որ վերջինիս կատարած հանցանքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին, «մարիխուանա» փեսակի թմրամիջոցը օժտված է համեմատաբար ոչ բարձր հանրային վրանգավորությամբ, ուսումնասիրելով մեղադրյալի անձը (դատվածություն չունենալը և փեսողության հեր կապված առողջական խնդիրներ ունենալը), որպես պարասիանաարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք հաշվի առնելով մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը, կատարածի

² Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 37-42:

համար զղջալը և նախաքննության ընթացքում խուսրովանական ցուցմունքներ փալը, պարասխանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում հիմնավորված կերպով գրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պարժի նպարակների իրականացումը հնարավոր է առանց Մնացական Սերյոժայի Մուրադյանի կողմից իր նկարմամբ ազարագրկման ձևով նշանակված պարիժը կրելու, հերևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ այդ պարիժը պերք է պայմանականորեն չկիրառել:

(...) Վերաքննիչ դարարանը նույնպես գրնում է, որ մեղադրյալ Մնացական Մուրադյանի նկարմամբ ազարագրկման ձևով նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելով՝ հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված պարժի նպարակներին՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

(...) Վերաքննիչ դարարանը հարկ է համարում արձանագրել, որ պարասխանարվության և պարժի անհարականացման հիմք են ոչ միայն կարարված արարքի հանրային վրանգավորության բնույթն ու ասրիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեարանական և քրեահրավական, ֆիզիկական հարկությունների համակցությունը (ընրանեկան դրությունը, վարքագիժը աշխարանքում և կենցաղում, աշխարունակությունը, առողջական վիճակը, փարիքը, սեռը, դարվածությունը և այլն):

Միննույն ժամանակ, Վերաքննիչ դարարանը հարկ է համարում արձանագրել, որ պայմանական դարապարրում կիրառելու դեպքում դարարանի կողմից մեղադրյալ Մնացական Մուրադյանի վրա դրվել է պարականություն՝ չլքել ՀՀ փարածքը, մեղադրյալը փորձաշրջանի ընթացքում գրնվելու է ՀՀ արդարադարության նախարարության պրոբացիայի ծառայության՝ մեղադրյալի բնակության վայրի արորաբաժանման վերահսկողության փակ և օրենքով նախարեաված համապարասխան դեպքերում այդ մարմնի միջնորդությամբ կարող է դրվել նաև պարիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը:

(...) Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն պնդմանը, թե՛ (...), ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) դատավածությունը բնորոշվում է որպես անձի հանրային բարձր վրանգավորության մասին վկայող հանգամանք, հետևաբար դատավածություն ունեցող անձի համար նոր հանցագործություն կատարելու դեպքում ծագում են քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Միևնույն ժամանակ, նախկինում դատավածություն ունենալը չի նշանակում, որ անձն իր ամբողջ կյանքի ընթացքում համարվում է հանրային բարձր վրանգավորություն ունեցող: Քրեական օրենքը նախատեսում է դատավածությունը հանելու կամ մարելու հնարավորություն, որի դեպքում անձը օրենքի տեսանկյունից համարվում է որևէ հանցանք չկատարած, ուստի և նրա դատավածությունը չի կարող առաջացնել քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ, այդ թվում՝ չի կարող հաշվի առնվել նոր հանցագործության համար պատիժ նշանակելիս»:

Տվյալ դեպքում Մասցական Մուրադյանը համարվում է դատավածություն չունեցող անձ, հետևաբար սույն քրեական գործի շրջանակներում նրա նախկին դատավածությունը որևէ քրեաիրավական հետևանք չի կարող առաջացնել, ինչպես նաև չի կարող հաշվի առնվել նոր հանցագործության համար պատիժ նշանակելիս (...)»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

10. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված պատժաչափի և այն պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

³ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 44-56:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությանը պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիրավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպարակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընդհանրիկ կենսապայմանների վրա ազդեցությամբ (...):»:

Պատժի նշանակման համաչափության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների⁴ լույսի ներքո ուսումնասիրության և գնահատման ենթարկելով Մ.Մուրադյանի անձը բնութագրող հանգամանքները՝ դատվածություն չունենալը, «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ»-ի համաձայն տեսողության հետ կապված առողջական խնդիրներ ունենալը և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը՝ մեղքն ընդունելը, կատարածի համար գղջալը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին:

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակվել է համաչափ պատիժ: Հետևաբար, դրա վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

13. Մինևույն ժամանակ, անդրադառնալով Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մաղաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, *Արմեն Շահրազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, *Գարսևան Ոսկանյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0119/01/13, *Գառնիկ Գալստյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, *Էդվարդ Աղամյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14, *Սարգիս Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14, *Մարատ Սարգսյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԱԲԴ/0144/01/12, *Նարեկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14 և *Ռուզաննա Գևորգյանի* գործով 2022 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԱԲԴ/0008/01/20 որոշումները:

նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցերին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում անդրադարձել է մի շարք նախադեպային որոշումներում⁵: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պատիժ նշանակելու և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները շարունակում են վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառելի լինել նաև գործող քրեաիրավական կարգավորումների նկատմամբ:

14. Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատարանի համոզվածությունը և վստահությունն այն մասին, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլնի, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա⁶՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, հանցանքի սուբյեկտիվ կողմի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները,

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Սարգիս Խաչատրյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14, *Նարեկ Խաչատրյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14, *Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուգույանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԴԴ/0011/01/14, *Սերգեյ Արովյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԴԴ/0038/01/15, *Արմեն Գրիգորյանի* գործով 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ ԵԴ/0335/01/19, *Անդրանիկ Ալավերդյանի* գործով 2021 թվականի հուլիսի 20-ի թիվ ԿԴ2/0026/01/19 որոշումները:

⁶ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արարատ Ավագյանի և Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն⁷:

ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի համաձայն՝ « 1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմեղր (հոգեներգործուն) նյութ, դրանց պարբերաբար կամ դրանց համարժեք նյութ (անսայրգ) կամ դրանց ածանցյալ կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պարբերաբար, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը՝

(...)

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝

պարժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով (...):»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Մ.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում և նրան մեղադրանք է ներկայացվել⁸:

- Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Մ.Մուրադյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց Մ.Մուրադյանի կողմից իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով⁹:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԳ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0039/01/15 և այլ որոշումները:

⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը, ըստ էության համաձայնել է Առաջին ատյանի դատարանի հետևությունների հետ¹⁰:

16. Վարույթի փաստական տվյալները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված հանգամանքները բավարար չեն ողջամիտ հետևության հանգելու առ այն, որ պատժի նպատակների իրագործման տեսանկյունից բացակայում է մեղադրյալի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Այլ կերպ՝ ստորադաս դատարանների կողմից Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս արձանագրված հանգամանքները ողջամտորեն չեն նվազեցնում մեղադրյալի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանն այնքան, որ վերջիններիս նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը լինի իրավաչափ:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, ստորադաս դատարանները պատշաճ իրավական վերլուծության չեն ենթարկել մեղադրյալի կողմից կատարած հանցավոր արարքի բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ.

ա) խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ մեղադրյալ Մ.Մուրադյանին մեղսագրվում է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություն,

բ) հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի նկատմամբ, մասնավորապես այն, որ մեղադրյալը գործել է ուղղակի դիտավորությամբ,

¹⁰ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

զ) մեղադրյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանրացնող հանգամանքի առկայությունը, այն է՝ հանցանքն առանձնապես խոշոր չափերով կատարելը,

դ) շրջանառվող թմրամիջոցի **տեսակը** և **չափը**, այն, որ մեղադրյալն Արամուս գյուղի հարակից դաշտամիջյան տարածքից քաղելու և չորացնելու միջոցով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափերի՝ 85.76 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

18. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցեին վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների՝ մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրած հանգամանքները բավարար չեն կարող համարվել՝ ողջամիտ հետևության հանգելու առ այն, որ պատժի նպատակների իրագործման տեսանկյունից բացակայում է Մ.Մուրադյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Այլ կերպ՝ ստորադաս դատարանների կողմից Մ.Մուրադյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված անձը բնութագրող և քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ դատվածություն չունենալը, «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ»-ի համաձայն տեսողության հետ կապված առողջական խնդիրներ ունենալը, մեղքն ընդունելը և կատարած արարքի համար զղջալը, քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, իրենց համակցության մեջ չեն կարող ողջամտորեն փաստել Մ.Մուրադյանի կատարած արարքի և նրա անձի՝ հանրային վտագավորության աստիճանի նվազեցման մասին և մեղադրյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք հանդիսանալ:

19. Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Մ.Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

20. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 5.3-րդ կետում վկայակոչված փաստարկին, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մարված դատվածությունն անձի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնելու հնարավորության հարցին, արձանագրել է, որ քրեական օրենքի իմաստով դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող և անձի նկատմամբ պատիժ նշանակելիս չի կարող գնահատվել որպես մեղադրյալի անձը բացասական բնութագրող հանգամանք¹¹:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Մ.Մուրադյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի խախտում: Արդյունքում, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածով նախատեսված նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Հետևաբար, անհրաժեշտ է Մ.Մուրադյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-ի դատական ակտը փոփոխել: Մ.Մուրադյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը պետք է վերացնել և թողնել կրելու Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով նրա նկատմամբ նշանակված՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով ազատազրկումը՝ պատժի կրման սկիզբը հաշվելով Մ.Մուրադյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արյուշ Շաքարյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13, *Սարգիս Գալստյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0078/01/13, *Ռաֆայել Մամկելյանի* գործով 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ԱՐԴ/0040/01/21 որոշումները:

դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մնացական Սերյոժայի Մուրադյանի վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը փոփոխել:

Մնացական Սերյոժայի Մուրադյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով ազատազրկման ձևով նշանակված պատիժը նույն օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելը վերացնել և թողնել կրելու նրա նկատմամբ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով նշանակված՝ 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով ազատազրկումը:

Պատժի կրման սկիզբը հաշվել Մնացական Սերյոժայի Մուրադյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից:

2. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ